

Երեւոյն



4

(175)
Ապրիլ, 2021

ՅՈՒՆԱԳՄԲԵԹ ՔԱՂԱՔԻ ԵՐԳԱՍԱՅԸ



Արա Արթյան

ԱԼԼԱԴ ՀՈՂՄԻ ՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Դու Կոնստանտին Սարգսի ձին
Ու ծյուն ժայթում իր պնդելից,
Աղի բաղաբջ թխիր էսօր
Ու երազիդ մեջ ջուր տուր ինձ:
Թե չես սիրում-մի էլ գթա
Դու պաշ էիր, հիմա ցավ ես,
Բայց թե քեզ ո՞վ, ո՞վ ջուր կտա,
Թե երազիդ մեջ ծարավես:

Գազազել է Սուրբ Սարգսիսը,
Աղջնակ չի գտել հարմար,
Ես ի՞նչ անեմ, թե նա քեզ է
Հարսիկ ընտրել հողմի համար,
Վախենում եմ գուցե նա գա
Ու գիշերով փախցնի քեզ,
Այնժամ քեզ ջուր տվող չկա,
Թե երազիդ մեջ ծարավես:

Մեր ճերմակած կտուրից վեր
Նրա ճերմակ ձին է սուրուն,
Կարոտիս ո՞վ կտա թևեր,
Երբ բախտի տեղ ձյունն է պա-
րուն,
Իսկ արյունս ունի վարսեր՝
ճերմակ-փափուկ այլուրի պես,
Թող ես գիշեր լացեն հարսեր,
Թե երազիդ մեջ ծարավես:

ՈՒՂԵՐԶ

Թող սրտիս մեջ պայտը ձիուր,
Իմ ճերմակող արյունը՝ քեզ,
Լոկ սերս մի՛ խմիր, մրրիկ,
Թե երազիդ մեջ ծարավես:

ԲԱԼԼԱԴ ՀԱԶԱՐԱՆ ՀԱՎՔԻ
ԵՎ ԿՐՏՍԵՐ ԱՐՔԱՅՈՐԴՈՒ
ՄԱՍԻՆ

Դու մի նայիր իմ ճերմակին,
Թունդ է գինին իմ սափորի,
Խշշում է խենթ հոգուս այգին,
Ջահելանում եմ օր օրի,
Ու հազարան իմ հավքին է
Կանչում սիրտս ոսկեխնձոր,
Իմ դեմ՝ անդարձ մի ճանապարհ,
Հավատի լեռ, սարսափի ձոր:

Ճամփա ընկիր: Ետ կղանա՞ս
Դու հազարան երգով լեցուն,
Տեր կկանգնե՞ս քո անհասին
Աստծունը թողած Աստծուն:
Ճամփա ընկիր: Ու կհասնես
Դու դռների մոտ անձանթ,
Ուր դրված են ասես դիտմամբ
Խոյի դեմ՝ միս, գալիի դեմ՝ խոտ:

Միսը գայլին, խոտը խոյին,
Ու երբ ամեն իղձ հագնեմ,
Կշողշողա հավքն հազարան
Եվ այլևս՝ հար թոնն է նա:
Այնժամ կերգի հոգուդ այգին,
Կերգի սիրտդ ոսկեխնձոր,
Երբ հազարան երգիդ ի գին
Կճերմակես դու օրեցօր:

Արա՛ Արթյան, մինչ անդա-
նիկ գրքիդ լույսընծայումը մենք
հասցրինք բերանացի անել քերթ-
վածներիցդ շատերը և քեզ նման
հեգեցինք՝ «Պոտի մնամ ես գյու-
րեցի», ու խորհեցինք:

*Խելընձերիդ մահն էր հանաք՝
Խընդցրին ու զմացին,
Դասաբներդ կերթան մենակ
Սև քարերուդ հոգեհացին:*

Յոթնագրեթե քաղաք Գյումրի,
Արթին պապի թոռ բանաստեղծ
Արա Արթյանը պայծառատեսի
կանխեմքարությունը գիտեր գա-
լիքը ու սգատոններից բարձրացո-
ղի հավատընկալությանը պիտի
ասեր՝ Գյումրիին չկա, տեղը մենք
ենք՝ «Ծ՛ր, երգից վեր հեչ բան
չկա: Ապա և հորդորանքով հարց
պիտի տար ինքնիրեն:

*Ճամփա ընկիր: Ետ կղանա՞ս
Դու հազարան երգով լեցուն,
Տեր կկանգնե՞ս քո անհասին
Աստծունը թողած Աստծուն:*

Իրապես՝ Աստծունը՝ Աստծուն,
իսկ բանաստեղծինը՝ ժողովր-
դին՝ նրան, ում ակունքներից դու

խնում ես լիաբուռն, ում տվածը
չափում ես երկնքով ու քեզ վե-
րապահված նախասահմանյալ
հրաշքով:

«Յոթնագրեթե քաղաքը» ինք-
նարարումը է: Ինչից էլ սկսես,
միևնույնն է, խելքամաղդ նրանից
է սկսվում, բացվող օրվա մեջ հո-
ղին բոբիկ կանգնելու անուշ կան-
չով:

*Իմ քաղաքի՛ առավոտ, քարի՛
վրա թխած հաց,
Քեզ չեմ նետի ես գետին, թեկուզ
ափերս դառես,
Իմ մեջ ապրող լույսը ողջ լոկ դու
պիտի սպառես,
Իմ քաղաքի՛ առավոտ, քարի՛
վրա թխած հաց:*

*Իմ քաղաքի՛ առավոտ,
իմ հարսնացու լողացած,
Կաթիլները քո հնչուն իմ
սրտխփոցն են ասես,
Իմ քաղաքի՛ առավոտ,
քարի վրա թխած հաց,
Քեզ չեմ նետի ես գետին թեկուզ
ափերս վառես:*

Գյումրեցու տոհմիկ երգի
հաստատումը քո տարերքն է.
տակավին թունդ է սափորիդ գի-
նին, և սիրտդ ոսկեխնձոր դեռ
երկ հազարան հավքին էր կան-
չում:

Բալլադներդ ուղերծ-պատ-
գամներով, վկայում են, որ բա-
նաստեղծը մինչև չմոլորեցնի
չարակնանուն, չի կարող գրով
հնայել:

Դե հմայագրով ասա՝ ո՞ր բա-
նաստեղծը չունի հրեղեն ձիու և
Հազարան հավքի (գյումրեցին
կըսե՛ Տուտու դուշի) երազանք,
ո՞վ չի մասնակցում մուսաների
շուրջպարին, չի շնջում աստղե-
րի հետ, ո՞վ չի պոկվում հողից ու
վնգալով միանում վեր-վեր ուժե-
րին:

Այսպես՝ կյանքի բերան ըն-
կած, պոետական փոքր ձևի մեջ
հասնելով առավելագույն խտուք-
յան, հաջորդիվ ծնվելու էր «Ման-
րակերտ»-ը՝ հոգուդ վրձնահար-
վածները՝ ինքնախոստովանութ-
յուններով: Լավագույն երգերս/ես
գրել եմ օդում/ իմ աջ ցուցամա-
տով/Դրանք անգիր գիտե աշնան
քամին: Նաև՝ Նետս արձակեցի /
ես գիշերվա մեջ,/ Ու լույսը բաց-
վեց: Ապա և՛ Ո՞վ է շնջում ինձ՝
/Խատուտիկ է կյանքը/Մահը՝
թեթև քամի:

Իմաստուն խոկուններիդ
նշխարատուփ այս ժողովածուն
և շերամի որդի մետաքս արա-
րունից մեզ տանում հասցնում
է խառ լույսն, որտեղից և
սկսվում է զգայապիրկ ԲԱԼԼԱ-
ՏԵՂՈՒԹՅՈՒՆԻՆ...

Արա՛ Արթյան, Սուրբ Սարգ-
սի ձիու պայտը սրտիդ մեջ շո-
ղացնող տավրահար ասպետ,
քո երգասանությանը մնա՛ ձիու
թամբին, Յոթնագրեթե քաղաքի
հառնումից սկսյալ՝ դեպի առաջ...

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՏԸ՝ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԿԵՐԱԿԻՆ

Վերջերս ընթերցողի սեղանին
դրվեց արցախցի բանաստեղծ
Ռոբերտ Եսայանի «Թատերա-
վեստի երախտավորը» գիրքը,
որում ընդգրկվել են հեղինակի
2016-2017թթ. հարցազրույցնե-
րը ԼՂՀ ժողովրդական արտիստ,
նեժիստր Լեոնիդ Հարությունյանի
հետ:

Լեոնիդ Հարությունյանի մեկ-
նարկային ներկայացմամբ՝ Դինո
Բուցատի Դինո Բուցատի Դինո
Բուցատի Շեքսպիրի «Մակբեթ»
ողբերգության բեմադրությամբ
ազդարարվել է շնորհալի նեժի-
ստրի ծնունդը: Ի դեպ, դա Լեոնի-
դի դիպլոմային աշխատանքն էր:
Մեծ աշխարհն ու կյանքի խոր-
հուրդը նեժիստրը տեսնում է բեմի
վրա, ինչպես ինքն է ասում՝ բեմը
թատրոնի սիրտն է, ամեն ինչ կա-
րելի է փոխել, բացի սրտից, իսկ
թատրոնի ոգին նեժիստրն է, որը
պիտի կարողանա լուծել ինչի և
ինչպեսի խնդիրը արվեստում:

«Թատերարվեստի երախտա-
վորը» հարցազրույցների գիրքը

ստեղծագործ ոգու դրսևորումնե-
րի ծիրում բացահայտում է Լեո-
նիդ Հարությունյանի անմնացորդ
նվիրումը թատրոնին ու թատե-
րաշխարհին:

Ուշագրավ է, որ գրքի հեղի-
նակ Ռոբերտ Եսայանը բանալի
բանաստեղծություններով է ներ-
կայացնում Լեոնիդ նեժիստրի
ստեղծագործական ճանապար-
հը և նրա աշխատանքային գոր-
ծունեության շառավիղը Հայաս-
տան-Արցախ աշխարհում: Գիրքը
ճառագուն է մեծ սիրով, խոհուն
իմացությամբ և ժամանակի մշա-
կութային կյանքի բաբախագիրը
լինելով՝ անդրադարձ է ոչ միայն
Լեոնիդի անցած ճանապարհին,
այլև թատրոնին ու բեմին նվիր-
ված մեծերի հուշերին ու զնահա-
տականներին: Նվիրյալ նեժիստ-
րի մոր օրը յուրօրինակ դարձ է ի
շրջանս յուր, դարձ արմատների:

Գրքի շնորհանդեսը տեղի ու-
նեցավ օրերս Գյումրու գեղագի-
տության ազգային կենտրոնում՝
մասնակցությամբ Լեոնիդ Հա-

րությունյանի ընկերների, հոգևոր
գինակիցների ու մտերիմների,
որոնք իրենց սրտի խոսքով վե-
րարժանեցին գիրքը/ի դեպ, երկ-
րորդ հրատարակությունն է/:

ՀԳՄ Շիրակի մարզային բա-
ժանմունքի նախագահ Անդրանիկ
Կարապետյանը Լեոնիդ Հարու-
նյանյանին փոխանցեց «Նարե-
կացի» մեղալ Արցախի Հանրա-
պետության գրողների միության
կողմից: Իսկ գրքի հեղինակին
արցախցի բանաստեղծ Ռոբերտ
Եսայանին տրվեց Վկայագիր
հայ ոգու շարունակական բացա-
հայտումների և գրական բեղուն
գործունեության համար: Բանա-
սիրական գիտությունների թեկ-
նածու Կարինե Մարտիրոսյանը
մասնավորապես նշեց, «Իր ձևի
մեջ ուշագրավ է այս գիրքը՝ միա-
ժամանակ մույն սերնդի, մույն
միջավայրի ու աշխարհ-իրակա-
նության երկու դեմքերը՝ գրողն
ու նեժիստրը, երկու արվեստա-
գետների միության մի իսկական
հյուսվածք, և մեկի տողերը մյուսի

ու իր մասին են միաժամանակ:
Ընտրված է հետաքրքիր ներքին
կապ՝ հարցազրույց, ենթախո-
րագրեր, ասես միասին և առան-
ձին պատումներով, արարնե-
րով, սակայն միևնույն ժամանակ
առաջ քաշվող հարցերին լիար-
ժեք ու անփոփ, ավարտուն պա-
տասխաններ:

Հարցազրույցներ՝ հարցեր,
պատասխաններ հուշի թևով, հե-
տախայաց՝ ուսանողական նստա-
րանից, սիրելի դասախոսներից,
ճակատագրական ու օրինաչափ
բուհական օրերից, «թատերա-
կան գյուտից», բեմադրության
գտնված բանալուց մինչև «նո-
րագյուտ» արարումներ, այլև
երբեք իր կրկնությունը չունեցող
նեժիստրական հնարքներ և այլն»:

Այնուհետ զնահատականի
խոսքեր ասացին Սիրանուշ Դու-
կասյանը /նեժիստր, ՀՀ արվեստի
վաստակավոր գործիչ/, արձա-
կագիրներ Շնորհիկ Շահինյանն
ու Արմենուհի Մխիթարյանը, նե-
ժիստր Գառնիկ Սարգսյանը, բա-

նաստեղծներ Արտաշես Ատոմն ու
Ռոզա Հովհաննիսյանը, Արցախ-
յան 1-ին գոյամարտի ազատա-
մարտիկներ Մնացական Մու-
րադյանն ու Արթուր Սարգսյանը:
Ներկաները վայելեցին քյաման-
չահար Հակոբ Խալաթյանի կա-
տարողական բարձր արվեստը,
իսկ Լեոնիդ Հարությունյանը պա-
տասխանեց նրանց հուզող հար-
ցերին:

«Թատերարվեստի երախ-
տավորը» գրքի շնորհանդեսն
ամփոփվեց գրքի հեղինակ, բա-
նաստեղծ Ռոբերտ Եսայանի
շնորհակալական խոսքով: Նա
նշեց, որ արդի ժամանակներում
մեր գերքաղաքականացված
կյանքում անչափ կարևոր է, որ
ստեղծագործող մարդիկ մատը
դնեն կյանքի զարկերակին և փոր-
ձեն մշակույթով ներազդել նաև
հասարակական-քաղաքական
զարգացումների վրա:

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՌՈՉԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
«Արգելակման
ճառագայթումը»
ԸՆԹԵՐՅԵԼԻՍ

Գտնված բառերի ու պատկերավոր մտածողության անվերապահ տիրուհին է Ռոզան, սիրելի Ռոզա-Վարդը՝ հանրածանոթ իր բացառիկ պատկերավոր խոսքով ու իմացության անընդգլտելի հորիզոններով: Աստվածային մի շնորհով նա բացառիկ է վերլուծական մտածողությամբ, իսկ գեղեցիկ ու պատկերավոր հայերենը հոսում է նրա շուրթերից, ինչպես իր պապերի երկիր Մշո սառնորակ աղբյուրների՝ սրտի պապակը հագեցնող հորդումը:

Մեր ձեռքին է նրա հերթական գիրքը՝ «Արգելակման ճառագայթումը»՝ բանաստեղծական արարմանը հանգույն գողորիկ մի ժողովածու՝ անսովոր ձևավորմամբ վկայելով նկարչի՝ Վազգեն Պահլավունի թաղանթյանի ու ձևավորողի՝ Մկրտիչ Մաթևոսյանի անուրանալի ճաշակի մասին: Մոտ երկուսուկես տասնամյակի պատմություն ունի նրա «բառաղջիկների» շքեղ երթը, որ չի դադարում զարմացնել ու հիացնել նրա պոեզիայի համակիրներին, այդուհանդերձ ամեն անգամ հանդգնում են իմ տարիներ առաջ արված բնորոշման իրավացիության մեջ: «Գյուտի, աշխարհատեսության ինքնօրինակություն, որ քեզ հանկարծ բարձրացնում է իր թևերին ու տանում, տանում է

մի ուրիշ եզերք՝ բարձր ու անմատույց, ուր ապրում է իրեն հատուկ կարգ-օրենքներով՝ «քնքուշ, հախուն, թախտախառն...»: Գիրքը ընտրանքն է այլ առավելություն էլ ունի. այն հնարավորություն է ընծառում ընկալելու անցած ճանապարհների՝ նշածողերը հենց իր «ընտրյալների» շնորհիվ՝ ուր է հասել Ռոզան, ինչպես է կայացել նրա հետագա ուղին, տարիների հեռավոր ինչպես է գնահատում իր վաստակը: Նկատելի է նրա երթի անբաժան ուղեկցի՝ Շիրակի ժողովրդական բառուբանի հաճախացող ու անսպասելի ներխուժումները բանատող արդարացնելով «խաղիկներ» հեղինակային բնորոշումը: Արդեն 20-րդ դարից գրականության մեջ հստակորեն առանձնացան 2 հակոտնյա շերտեր՝ զանգվածային գրականություն և էլիտար գրականություն, որոնք գնալով ավելի ու ավելի են հեռանում միմյանցից: Ռոզայի բանաստեղծությունն անվերապահ բարձրաթիվ է, երևակայության սլացքներին հյուս, որոնց «զգեստավորում է» բացառիկ դիպուկ ու անսովոր մետաֆորներով: Մի խոսքով՝ բանաստեղծությունը դառնում է հեղինակի հոգու հերթական հայտնությունը, նրա հարուստ հոգեաշխարհի, տրամության ու ազնիվ

թախծի ազնվագարն պտուղը՝ «ճոճանակված երգը՝ մաքուր երեխա»...

Պրովանսի տրուբադուրների մեջ կային նաև կանայք, որոնք հյուսում էին իրենց «զվարթ գիտությունը» իբրև ելք, ինքնասպառում, իբրև քչերին հասանելի երջանկություն: Ահա Ռոզային ընթերցելիս շարունակ մեզ ուղեկցում է դարեր առաջ կանացի հավերժական բանաստեղծության շունչը: Նույնն են ու հավիտենական կանացի հոգու՝ հարագատ մի այլ հոգու տենչանքը, սուրբ կարոտների ապարդյուն որոնումը, և, ինչու չէ, անզոր ինքնահեգնանքը, այլասացության վարպետությունը: Այդ ինքնեկ ու անճիգ մետաֆորները՝ ծանոթ-անծանոթներ, այնքան բնական են ինչու, որ հաճախ չեն թողնում նորաբանության տպավորություն, իսկ հենց այստեղ են մեզ սպասում անակնկալներ՝ գրաբարյան հարուստ բառամթերք, կողքին՝ նոր անակնկալ բանաստեղծական կազմություններ, որոնք հեզությամբ ենթարկվում են իրենց բավուհուն... Ահա սպասումների տարափը՝ «իմ ծնեբեկ սպասումները՝ մորեններ, մորենխելառ», վարդասիրտ, լռախառ, բիծոտ օր, բարձրակեր լուսին... Այս տողերն էլ դառնում են անանձնուհու հոգու տիեզերքը բացահայտող հայտնություններ: Ծայրից ծայր երևակայության թռիչքներ են «Խատուտիկը», «Լուտանքազորով», «Վաղուց», «Մայրագինում», «Ծափահարի մինչև մահ...»:

Իմ ազատ սենյակ հայով, / Իմ տորիչեյան պարսպ հայով, / դռնբացե՛ք ծիսական մուտք են՝ նրազել/դեպի իմ հատակ-սիրտը,

դեպի իմ պատ-կարծությունը, / դեպի իմ առաստաղ-երկինքը... / «ես ազատ սենյակ եմ»:

Դժվար է ընտրություն կատարելը: Իր տեղերական մեծակությունն արտահայտելու համար, որ, ի դեպ, մարդ էակի մեծակությունն է մեր մարդաշատ դարում, Ռոզան դիմում է բազմապիսի մետաֆորների՝ կարողանալով չկրկնել ինքն իրեն: Հայտնվում են հեթանոսական տեսլապատկերներ՝ խորհրդանշելով բարձ-

րագույն վայելքի հախուն լիութունը, կյանքի ամբողջականությունը: Նա փորձում է պարզել իր տեղն ու խորհուրդը տիեզերքում, սակայն հայտնվում է աներբ ու անուր տեսլապատկերներում/ միջնադարյան ձեռագրերում այսպես են նշել անսահման տիեզերքում արարչի աննուրբությունը: Ծարունակվում են բանաստեղծական ծավալումներն ու խորացումները՝ մինչև «երանելի խորք», երբ ոչ թե աշխարհն է փոխվում, այլ խորանում է օտարվածության անսփոփ զգացումը:

Երբ ամեն ինչ միևնույնն է, / Ես քրքրում եմ. / սա իմ վերելքն է:

Գիտության հսկայաբայլ առաջընթացն ուղեկցվում է մարդու և մարդկայինի հսկայաբայլ կորստով: Այսպիսի խորացումներով է ծավալվում գրքի ընդհանուր տրամադրությունը / «Երկվություն»/:

Կյա՛նքս փոխեն՝ թե՛ կոշիկներս, / երբ հնարավորությունս միայն / կոշկաբուլ փոխողի է...

Դարձդարձիկ ու հարափոփոխ երևակայությամբ բանաստեղծուհին օգտվում է ոճական տարբեր հնարքներից. դա մերթ «երգունակ» խոսքային միջավայրն է / Ինչ նորություն ինձնե, / Գեթաբ-հեթաբ տատա, / մերթ իր սիրելի գրողի «Տաղարանի» ոճավորումը՝ գրողի, արվեստագետի և հասարակության անխուսափելի օտարումով / Երկինք չափելու սիրտ չունեն, / մերթ էլ անփույթ-ժողովրդական բառ ու բանի ոճավորումով, երբ խոսք է ասում հարագատ քաղաքի մասին / «Ծո՛ քաղաք», «Երկան արև Վազոյին»/:

Սա մի քաղաք է, / որին ի վերուստ տրված է անմեկնելիք, / մի քաղաք, / որ հսկում է զարմանալիքն, / ինքն իրեն թափ է տվել և տեսել, / որ կենդանի է. / այլևս մոխրի մեջ նստած չէ՛ / թևապարը չբացած / կարմիր թիթեռների ներսպարով, / երկնքից թափվող արցունքն մարգարիտներով:

Մի սիրուն ու չարածճի ինքնահեգնանք է «Կարմիր կաթեց»: Սա այն եզակի դեպքե-

րից է, երբ հեղինակը ոչ միայն տիրապետում է իր խոսքով ասած՝ բառի այլուրեքությանը, այլև քանակը կերտում է դրակի նրա մեջ խորասուզվելով ծայրից ծայր՝ գրեթե սպառելով նրա բառային հնարավորությունների սահմանը... Սովորական, մեռած, հնարավորություններն սպառած բառը հանկարծ ստանում է նոր լիցքեր ու հառնում մի նոր կյանքի ու իմաստի համար:


...Փակ ու/ մարած ցանկությունների զարդատուփը երբ/ բացում են օրեր անց, դենք ի վեր շփացնում է չապարձող մազլցող ցավը...

Ահա և քնարական օրագրի 7-րդ օրվա եզրահանգումը. «Շաղ տված հուլունքների մեջ երազեցինք երազելի, մեր աղջկաբոյը հույսի հետ չափեցինք, սիրաչափեցինք, անչափեցինք ու քանվեցինք անուրջների մեջ»:

Ռոզա Հովհաննիսյան բանաստեղծին ուզում են իսկապես ճանաչել՝ կարդա՛ «Բառ-աղջիկը» նրա ինքնության գտնված խորհրդանշանը, որ չեն համարձակվում խլել իր միջավայրից...

Բարին ընդ քեզ, երկար-երկար անցնելիք ճանապարհներ... Ինչ էլ ասես, սիրելիս, երջանիկ ես, քանի որ մանրահատվող ու օրավոր փլուզվող աշխարհում տեր ու տնօրեն են քո փղոսկրե աշտարակի...

Անահիտ ՀԱՎԿԵՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու
20.03.2021



Մեղա
Միևնայան

Ծնվել է 1999 թ. Գյումրիում: Վերջերս ավարտեցի Շիրակի պետական համալսարանը: Մասնագիտությամբ պատմաբան եմ:

Արվեստն իմ հավերժական սերն է, հոգու բալասանը, կյանքիս ներդաշնակությունը, ինքնարտահայտումս ու լավատեսությանս գրավականը: Արվեստը միավորում է բոլորիս: Թույլ է տալիս մեզ զգալ՝ մեծ ու կարևոր շղթայի մասնիկ ենք, բոլորս մեկ ենք, ունենք գերակա նպատակ՝ աշխարհն ավելի լավը դարձնել:

ՄՐԲԱԶԱՆ ԳՈՂ

ՎՐՉԱՀԱՐՎԱԾ ՕԳՈՍՏՈՍԻ

Վրձինս դեղնուտել եմ, օգոստոսյան լուրք երկնքի վրա մեղմասահ վրձնահարվածներով արեգակներ նկարում: Ուզում եմ Օգոստոսին սովորեցնել գթասիրտ լինել անգութի հորձանուտներում:

Օգոստոսը կրակի վերջալույս է, միջօրեն հասցրել է կիզիչ թոճուրուհուն քեզնից վերցնել այն, ինչի կարիքն այգանալուն պես չես ունենա:

Վրձինս լուստուել եմ. վճռել եմ փթթուն արևածաղիկներ նկարել այգուս՝ այդպես էլ արևածաղիկներ չցանած, խոպան, անսերմ հատվածում: Արևածաղիկներն ինձ ներում են իրենց չցանվելը, ներամփոփ հողն էլ դա չի պահանջում ինձնից: Օգոստոսն ունի՞ց է ներում կորզելու ամառային երեկոներն ընչաբաղդությամբ կուլ տալու համար:

Մի՞թե սրդողած է Օգոստոսը: Ոչ վաղանցուկ սիրով սիրահարված է հուլիսին. ամեն տարի պարբերաբար նրան

կորցնելուց հետո, անհասկանալի հանգամանքներում անեացնում է նրանց, ուն հանդեպ նրբին զգացումներով ենք եղանակված: Նա կորցնում է հուլիսին, մենք էլ ամեն տարի աշնան արևի առաջին ճաճանջների հետ, ամռան հեռացող նոտաների ու աշնան նորաթուխ քամիների արանքում ինչ-որ շղարշիկ զգացողությամբ կորցնում ենք Օգոստոսը:

Հաջորդ տարի էլի մեզ մոտ է գալիս՝ նախորդ տարին մոռացած: Ինչպես հուլիսը երբեք նրա մոտ չի վերադառնում, այնպես էլ չեն վերադառնում Օգոստոսի՝ մեր կյանքից ցրած արևները: Նա մեզ չի ներում սեպտեմբերին սպասելու համար. իր վրեժխնդիր անձրևները սեպտեմբերյան խանդով թափում է մեր բացախոր կատարներին. նրանց մեջ ձյուն են խեղդել և պտտվում, օգոստոսյան ձնահյուս...


Օգոստոսի երկուսի՝ լույս երեքի գիշերը ինձ մի երազ կպարզի, որտեղ ես ու նա իրար ներել ենք, նստել ու խոսում ենք ինչպես հասուն առջիկը հա-

սուն ամսվա հետ. էլ լուսանքներ չենք թափում իրար գլխի, լուցիչ կրակներ չենք նետում միմյանց՝ առանց այն էլ բոցկլտացող հոգու անտառի մեջ, չենք մեղանջում իրար դեմ:

Նա ինձ բացատրել է կյանքս մաքրում է թերմացքից, որ կռունկի աչքի զուլալությամբ առվի պես հոսեն սեպտեմբերյան արտերով:

Ես նկարել եմ վերմակիս վրայի արևածաղիկներն ու նրան նվիրել. գուցե լրացնի օգոստոսյան արևածաղիկների պակասը մեր այգում: Նա քույրաբար պատմել է ինձ հաջորդիվ սքանչելի արարների մասին, ինձնից խոստում գողացել զաղտնի պահելու...

Փոխարենը՝ նրան սովորեցրել եմ օդից առավել անհրաժեշտ լինելու արվեստը:



Լույս է տեսել Աճի հասցատրոյանի «Ալեքը...Տիեզերքը...Կանաչ երկինքը...» գիրքը՝ հեղինակի բացառիկ նվիրումով ու նկարագրողմամբ:

Ալեքը մի անհուն տիեզերք՝ իրենից ծորացող կանաչ երկինքներով: Տիեզերքը վախենալու չափ հիասթափ է, Ալեքը՝ նույնի մարդու կերպը:

Նոթատարում նրա հզոր ձեռքերում գրված տողերն են. «Հուսամ կունենամ ունկնդիրներ, և իմ մտքերը չեն մնա տիեզերքի անսահմանության մեջ»: Այս տողերը կարդաց անձամբ ինձ մոտ ու ժպտաց՝ «ես գիտեմ, որ դու ես տիեզերքը, իմ տողերը վեր հանողը»:

իրամայեց՝ ապրել: Դուկասյան Ալեքը ծնվել է Աշոցքի շրջանի գյուղ Ռոստոպոլովում: Մասնակցել է 44-օրյա պատերազմին և ծուլվել երկնքին՝ իր երթյան գունապնակին: Ալեքը մասնագիտությամբ դերասան է: Ես կասեի՝ բնածին արվեստագետ՝ բնության գրկից դուրս եկած ու մաքրամաքուր: Նա այդպիսին էր ամեն ինչում: Հայ մշակույթը կորցրեց նրա մեծ արվեստագետին, սակայն ամբողջ մի տիեզերք նրանով լցվեց:

Ալեք Դուկասյան

Երբ մարդն ուժեղ է ոչ միայն բազկով, այլև հոգով, հազվագյուտ երևույթ է: Ներսում ապրող բարությունն էր նրան այդպիսին դարձրել: Հավատացնում եմ ձեզ: Ապրեցնող տեսակը գնում է մեզմեջ. ի՞նչ շերտեր կան անտեսանելի: Կյանքը մեզ խրատեց. չի՛ կարելի այսպես անել, այնպես խոսել, սրան-նրան խփել, բայց անհատին՝ մարդկային խղճուկ հյուլեին, իր հսկա հորձանուտում խեղդել ու թափահարել: Անարդար է: Անարդարի ու անազատի մասին շատ էր խոսում Ալեքը՝ կառնելով յուրաքանչյուր բառից, տառից, որ անտեղի, անհարկի չարտաբերվի իր հետ շփվելիս: Ամեն խոսքում մեծ է նա: Հայացքը՝ խորունկ ու արևոտ: Խորունկ ու արևոտ... մեծան հայացքներ հազվադեպ կգտնես երկրի վրա: Բնածին, արվեստոտ գույն ունի... ճախրում է բեմում. մեծան ճախրը հատուկ է օժտված դերասանին, ինչպես չմտածված վրձնահարվածը՝ նկարչին: Նա վրձնում է բեմում ամեն շարժում, ձայնի մեջ մեղմություն՝ խորխոր տոնայնությամբ, որ հատուկ է նրա տեսակին: Աչքերը փակում, զգում է յուրաքանչյուր բառը և բառը գրկած՝ մտնում բեմ... ապրում է այնտեղ,

զգելիս մի՛ նայեք նրան ձեր գաղջ մտածելակերպով, որ բռնանաք նրան և դարձնեք ձերը, որովհետև այն բոլորինն է: Թողե՛ք մեզ՝ բանականություն ունեցող արարածներին, ինչպես ուզում ենք, այնպես ընկալենք տարիների, եղանակների ու բնության հոգու նվերները, որ ուղղված են մեզ՝ մեր ներաշխարհը ներդաշնակելու բնության անձայր ու հիանալի անվերջության հետ:

Ալեք Դուկասյան

Մարդը մի անհուն տիեզերք՝ իրենից ծորացող կանաչ երկինքներով: Տիեզերքը վախենալու չափ հիասթափ է, Ալեքը՝ նույնի մարդու կերպը: Նոթատարում նրա հզոր ձեռքերում գրված տողերն են. «Հուսամ կունենամ ունկնդիրներ, և իմ մտքերը չեն մնա տիեզերքի անսահմանության մեջ»: Այս տողերը կարդաց անձամբ ինձ մոտ ու ժպտաց՝ «ես գիտեմ, որ դու ես տիեզերքը, իմ տողերը վեր հանողը»:

վայելում ինքն իրեն, իր մեջ բնակվող մարդուկներին: Մնում ու սնվում է հոգևորով: Նրան մշտապես զլխավոր դերերն էին տալիս. նա կարողանում է շերտ առ շերտ քանդել կերպարի ներաշխարհը՝ փռելով տիեզերքը բեմահարթակով մեկ:

Անդադար կարելի է Ալեք նկարագրել, որովհետև ինձ հաջողվեց հասնել նրա հոգու թաքնված շերտերին: Թվացյալ անմիջականություն ունի, բայց խորունկ ու անհասանելի է: Երբեմն միտքը չէր կարողանում հարմարեցնել բաներին ու դրանից նեղվում էր: Քայլում եմ հողակույտերի վրայով. քարքարոտ է ճանապարհը, քարաշատ ու ակոսապատ: Նայում եմ ոտնահետքերին. դրանցում ցեխաջուր է: Ճիշտ հայրենիքիս մեծ, որ մնայուն հետքերով, բայց կոխտված է: Հայրենիքի ու դրա հանդեպ տածած սիրո կարևոր դրսևորումն անցած ճանապարհին սերմ զգելն է: Ինձ համեմայն դեպս այդպես են ասել: Փորձում եմ սերմը զգել հողի մեջ, ջրել, ջուրս են կտրում, մի կերպ ջրում եմ: Ծիլը կանաչ է, խոտաճում է հրաշալի ծառ: Ես ճանապարհիս են գծում ու կանգուն ծառս բերք է տալու: Հաստատ: Իմ հայրենիքը, որտեղ շատ ծառեր են տնկվել ու բերք տվել, այսօր անլացել է: Իմ հայրենի լեռները խռովք են նետում մեզ ու ճաքում կուրծքը: Գոռում են, սակայն ո՞վ է լսում այդ երկինք պատռող գոռոց: Ես վախենում եմ. ծիլս կտրել են, ապագայի հսկա ծառը չի լինի, բերք չի լինի...ես չկամ, հողակույտը շատանում ու փակում է ճանապարհս: Բռունս պահում եմ կտրված ծիլը, կաղնին, որ ամբողջապես ինձ կերավ... Կաղնիազ... Կաղնի դարձա: Լռեցի... Անսասան է ժայռս, ամրակուռ, ճակատը՝ մխրձված երկնք: Ժայռի սրտում արծիվների բույնն է,

զլխին՝ ձնծաղիկը՝ խորհրդանիշը ժայռի ծննդի: Ալեք, ես քո էությունը անդադար կարող եմ համեմատել ու ձուլել բնությանը, որ խորքայնությունդ արտահայտել կարողանամ: Քայլող տիեզերք երկրի վրա... Գ.Գ. Բարև, կարոտ, բարև, սրիկա: Ես երբևէ չեմ իմացել, որ աշխարհում քեզմից եմ ամենաշատը վախենալու, որ դու իմ միակ ընկերակցողն ես դառնալու: Ինձ վանդակում ես պահում ու մտրակում ամեն օր, ամեն վայրկյանը մեկ՝ մի դաժան ռեզվին ստեղծելով հոգուս ստեղծերից. հանճարե՛ղ ես: Ես ճշում եմ ներս, դրանից սիրտս ճյուղավորվել է: Հենց այդպես, առանց որևէ չափազանցության: Հարցրու, թե ներաշխարհս ինչն՞ է լցված: Չեմ պատասխանի... քիթը կտնկես, երբ պատասխանս լսես, այն կշոյի քո փառքը: Ինչքա՞ն էր կար կանգնեցիր մեր միջև, ի՞նչ տգետ երգահան ես դու... մարդու դժգույն օրերի բեկորներից երգ ես նկարում քեզ համարելով բոլոր զգացողությունների մեջ գերագույնը: Սակայն... դու ճի՛շտ ես: Գերագույնն ես, երբ տապալել ես իմ ժպիտը, մյուսի ծիծաղը, սպասման հակամիջը վառ: Տես, թե որքան շատ են Ձեր մասին գրում իմ փոքրիկ Հայաստանում, պարոն Կարոտ: Դու էլ հայրենիք ունեցար և ապրում ես հավերժ հողի շերտերում, մոր աչքերում, սիրած էակի սրտում, երեխայի հոգում... հոր ծխամորժում, որ մխում ես դեռ: Երկնքից ծորում ես, Կարոտ, է՛ն երկնքից, որտեղից հազարավոր հայացքներ են կարոտում մեզ... Ես գրկում եմ բոլոր կարոտող մարդկանց, ես ձեզ չափից շատ եմ հասկանում: Աճի ԽԱՉԱՏՐՅԱՆ



ՍՈՒՔԻԱՍ ԱՂԱԼԱՐՅԱՆ

ԲԱՐԵԳՈՒԹ ԳԱՅԼԸ -Սիրո՛ւն գառնուկ, տեղյա՞կ ես՝ Տերը կուզի մորթել քեզ: Չար է շատ ու սիրտը պաղ, Կուզի անել քեզ մատաղ: Բարի եմ ես, եկ գնանք, Չէ՞ որ նոր ես մտնում կյանք, Քո մայրիկի մոտ տանեմ, Կարո՞տդ առ, ետ բերեմ,- Ասաց գայլը սրտակից, Տարավ, փրկեց դամակից...

ՍՈՒԿՆ ՈՒ ԱՌՅՈՒԾԸ

-Առյու՛ծ, լավ է լինես բարի, Չպառկես իմ ճանապարհին: Չայրացնում է քո դիրքը ինձ, Ել ու չքվիր դու իմ աչքից: Թե չէ՛ գայրույթս կթափեմ, Ախորժակով քեզ կլափեմ,- Ասաց մուկը այն տմարդին, Պոչով խփեց նրա թաթին:

ԱՅՈՒԾՐ ԲԵՂԸ Է՛ ԸՂԱԹԾԵԳ, ՄՆԱԳ ՏԵՂՈՒՄ ԾԱՆՐ ՈՒ ՄԵԾ:

Մուկն այնպես էր իրեն պահում, Կարծես արածը դեռ քիչ էր, Որովհետև նախագահի Մեծ նկուղի բնակիչն էր:

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ԵՂՆԻԿԸ

Պատահեց, որ դեմ առ դեմ եղնիկն ելավ մահի դեմ: -Ախորժակով քեզ կուտեմ,- Առյուծն ասաց ծանր ու մեծ Ու եղնիկին տապալեց,- -Դու փորձ արիր, որ կտրես ճամփան, որ անցնում եմ ես, Ահ կա անգամ իմ ծայնից, Դու վախ չունե՞ս ինձանից: Ա՛յ հանցագործ, մեղավոր՛ր, Քանի՞ գլուխ ունես, որ Դեմն ելնես, ա՛յ լղպոր: -Եղնիկ եմ ես մի անմեղ, Ո՞րն է իմ մեղքը այստեղ: -Նրանում է մեղքդ, որ Դու տկար ես, ես՝ հզոր:

ԱՂՎԵՍՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Մուկն աղվեսին դիմեց մի օր. -Թշնամի ենք խելացնոր, Եկ, ես ու դու ընկերանանք Ու վայելենք մեկտեղ մի կյանք: -Առաջարկդ, գիտեմ, զուր է, Ընկերներ չեն հուրն ու ջուրը:

ԱՂՎԵՍՆ ՈՒ ՎԱՌԵԿԸ

Սարից աղվեսը գյուղ իջավ, Հավանցում մի հավ տեսավ. -Ուրախ եմ, որ ելար իմ դեմ, Արի գրկեմ, թուշդ ուտեմ: -Վառեկ եմ դեռ, չեմ մեծացել, Անգամ մի ձու դեռ չեմ ածել: Բաց թող, քիչ էլ եմ մեծանամ, Հետո նոր ինձ կեր, զգա համ: Հավը փորձեց խորամանկել Ու ճանկերից կաշին փրկել: Բայց աղվեսը պահեց ետը. -Եթե գտնես սիսեռ, գարի, Մի՞թե չես կտցահարի: Պատկանում ես տխմար խավի, Ճիշտ որ ունես ուղեղ հավի, Մտքիցս չեմ հրաժարվի:

Մութ անկյունում, Գլխին սև ամպ, Լաց էր լինում Նավթի մի լամպ. -Ունեի հարգանք ու պատիվ Եվ սիրողներ բազմաթիվ, Մարդկանց տներում ու բակում Շուրջբոլորս էի հավաքում: Եկավ լամպը էլեկտրական, Ընկավ պատիվն իմ դրական, Ինձ նետեցին, Գցին անկյուն, Անտեսեցին, Էլ չեմ հարգում: Չեմ լուսացնում Օջախներ շեն, Հուսամ՝ գոնե Ինձ կհիշեն:

Ոչինչ չի մնա իր տեղում, Նորը հինն ետ է մղում:

ՕՉՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Օձը մեղվին ասաց այսպես. -Պատճառն ի՞նչ է, խայթո՞ղ բզեզ, Որ մարդն այդպես սիրում է քեզ, Պատրաստում է հարմար փեթակ, Որ դու ապրես այնտեղ տաք-տաք: Կծում ես այս երկնի ներքո, Բայց չեն ջարդում զլուխը քո: Ինձ պես ունես թույն յուրովի, Բայց ով տեսնի, քեզ կգովի: Ինձ պես խայթում ես ու կծում, Բայց քեզ ինձ պես չեն հալածում: Այստեղ մեղուն տզզոց հանեց Ու նախանձին պատասխանեց. -Ո՛չ ձայն ունես, ո՛չ ձեռ ու ոտ, Սողուն ես դու նենգ ու թունոտ: Մեջդ չարիք կա, նենգություն, Բերանիդ մեջ մահացու թույն, Դու՛ մահացու կծում, խայթում, Ես բարիք եմ տալիս մարդուն: Թեզ պես խայթող ու չար օձը Լավ է չքվի չռոյի ծոցը:

ՉԻՆ ՈՒ ԷՇԸ

Պատահեց, որ էշն ու ձին Պատահաբար հանդիպեցին: Էշը հուզված նրան ասաց. -Մեջքիս բերը ծանր է քոնից, Բայց տերը չի մեծարում ինձ: Ես քեզանից շատ եմ բանում, Տերը քեզ է գովաբանում: Ու ծիծաղից Թաց աչքերով Ձին խրխնջաց. -Հիշի՛ր, թե մեր հին առածը Ինչ է ասում. Շատ դատողին Շալե շապիկն է միշտ սազում:

ԹԻԹԵՈՆ ՈՒ ՃԱՆԸՆ

Թիթեռը լսեց տզզոց ճանճի. -Ապրում ես մի օր, Բայց դա հո կյանք չի: -Ճիշտ է, կյանքն իմ Տևում է մեկ օր, Բայց այդ մեկ օրում Կանցնեմ սար ու ձոր: Երկինք եմ տեսնում, Դաշտեր ծաղկազարդ, Իմ ապրած օրը Արժի մի ողջ կյանք: Իսկ դու աղբի մեջ Վարակ ես անվերջ, Թե՛ն շատ օրեր Կապրես քո դերում, Սակայն գարշահոտ Աղբակույտերում:

ԳՅՈՒՄՐԱՎ ԲԱԿԵՐԻ ՖԵՆՈՄԵՆԸ ԿԱՄ ԱԼԵՔՊՈԼՅԱՆ ՀԱՅԱԹՆԵՐԻՅ ԴԵՊՈՒ ԼԵՆՆԱԿԱՆՅԱՆ ԲԱՍԽԱՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Որևէ քաղաք ճանապարհորդելիս, լինի դա քիչ թե շատ ծանոթ կամ անծանոթ, առաջին և պարտադիր նախապայմանը այդ քաղաքը յուրացնելու համար ուղևորվել քայլերն են: Յուրաքանչյուր քաղաքի գրավչությունը, բացի գլխավոր շինություններից ու ճարտարապետական խորհրդանշաններից, փոքրիկ, մեղմ, ծուռ ու շիտակ փողոցներն են: Սակայն հյուսվածքների մեջ մտնելու և մեկ այլ միջավայր շոշափելու գրավականը քաղաքի թաքցված հատվածները՝ բակերը, բացահայտելն է:

Վերջին շրջանում Գյումրի քաղաքի հանդեպ զբոսաշրջային հետաքրքրությունը շատ էր: Զբոսաշրջիկները գալիս են Գյումրի, շրջում քաղաքի տարբեր մասերով, փողոցներով, պատմամշակութային վայրերով: Բայց առանց Գյումրու գողտրիկ, կոլորիտային բակերի, հնարավոր չէ պատկերացնել քաղաքի դիմագիծը:

Բացի պատմական և ճարտարապետական արժեք ներկայացնելուց, բակերը տների կամ շենքերի կարևոր մասն են: 2^o որ այստեղ են տեղի ունենում խելքների հավաքները, տաղավարային գրույցները, վեճերն ու կանացի բանբասանքները, լվացք ճիշտ փռելու նուրբ արվեստը, մանկական խաղերը՝ ձևավորելով բակային մշակույթը:

Գյումրիում յուրաքանչյուր տուն կամ շինություն ունի իր պատմությունը, և յուրաքանչյուր պատմություն՝ իր բակը/հարթը: Մտովի քայլերն Գյումրու փողոցներով, մտնենք բակերն ու բացահայտենք գրավչությունը: Ի սկզբանե եթե հետևենք Գյումրու բնակելի ճարտարապետության պատմական զարգացման ընթացքին, բակը եղել է տան գլխավոր հատվածներից մեկը, ինչի շուրջը տեղակայվել են տան մյուս հատվածները: Դեռ Կունյուրի ժամանակներից գետնափոր կամ կիսագետնափոր գյուղական տիպի տներում կենտրոնական տեղ է զբաղեցրել փակ բակը:

Ալեքսանդրյան շրջանում, երբ բնակավայրն ստանում է քաղաքի կարգավիճակ, մեծահարուստները կազմակերպում էին իրենց տները մեկը մյուսից ավելի ճոխ: Արդեն վերգետնյա քաղաքատիպ մեկ կամ մեկուկեսհարկանի տները կենտրոնացած էին բակերի շուրջը: Այս պարագայում բակերն արդեն ավելի բարեկարգ էին և մեծասանությունն ուներ քարով սալարկված դարավանդներ, հարթակներ, ջրավազաններ, աղբյուրներ, հաճախ նաև ջրհորներ: Չափազանց հետաքրքիր է լուծված բակի ներքին տարածությունը՝ կից կառուցված թոնրատնով /Ս.Մաթևոսյան, Գյումրիի

ժողովրդական ճարտարապետությունը, «Սովետական գրող» հրատ., Եր., 1985, էջ 23/:

Արդեն 19-րդ դարի կեսերից եկամտաբեր տները դառնում են ավելի ակտուալ: Երկհարկանի տների առաջին հարկը ծառայում էր որպես խանութ կամ այլ եկամտի աղբյուր, իսկ երկրորդ հարկը բնակելի հատվածն էր: Գլխավոր մուտքը բացվում էր դեպի կենտրոնական փողոց, իսկ սենյակները հաղորդակցվում էին ներքին բակի հետ: Բակը այս պարագայում ծառայում էր նաև տնտեսական նպատակներով:

Ալեքսանդրյան շրջանի կոլորիտային բակերից է Գեղամովների առանձնատան բակը: Ներկայումս այնտեղ տեղակայված է Իտալիայի հյուպատոսին պատկանող «Վիլլա Կարս» հյուրանոցը: Ժամանակին այն պատկանել է Գեղամով եղբայրներին: Շինության նախագիծը Թիֆլիսից հրավիրյալ իտալացի ճարտարապետին է: Տան կառուցումից հետո երեք եղբայրներն էլ այդտեղ են ապրել: Նրանցից միայն մեկն է ամուսնացած եղել, բայց զավակներ չի ունեցել: Կինը՝ Ամալյա Դմիտրիևան, գրագետ և արիստոկրատ կին էր: Երեք եղբայրների մահվանից հետո նա տանը միայնակ է ապրել: Տարիներ անց Ա. Դմիտրիևան տունը վաճառում է, բայց պայմանով, որ կշարունակի ապրել այդ տանը: Այժմ Մոնտալդոն բակը կազմակերպել է դեկորատիվ խճաքադրոյ, ջրհորով, փայտե նստարաններով, աղբյուրով՝ ստանալով կոլորիտային և գեղեցիկ միջավայր:

Ալեքսանդրյան բակերի առանձնահատկությունը ներքին պատշգամբների ու դռների փայտաշենությունը, դեկորատիվ փայտափորագրության նախշազարդ մոտիվներն են:

Նմանատիպ բակերի օրինակ է Մարիամ և Երանուհի Ալամազյան քույրերի պատկերասրահի բակը: Պատկերասրահի շենքը գտնվում է Գյումրու ներկայիս Աբովյան փողոցում և կառուցվել է 1880 թվ. մեծահարուստ վաճառականներ, հայտնի գյումրեցի ընտանիքի՝ Քեչիշովների կողմից՝ որպես իրենց բնակարան: Պատկերասրահի շենքը 19-րդ դարի Ալեքսանդրապոլյան քաղաքաշինության ճարտարապետության վառ օրինակ է՝ ներառելով այն ժամանակվա եվրոպական և ավանդական հայկական ճարտարապետության տարրերը: Ձևավորել է Գյումրուն բնորոշ սև տուֆով շարվածք ունեցող քաղաքի յուրահատուկ դիմագիծը՝ ներքին շենք բակով և փայտյա պատշգամբով:

Այսպիսի գողտրիկ բակերից է նաև նախկինում Սահակաճուլյան օրիորդաց դպրոցի բակը,

որը գտնվում է Սուրբ Նշան եկեղեցու հարևանությամբ: 1882 թվականին քաղաքի բնակիչների հանգանակած գույնարների հաշվին և մեծահարուստ, ազգային բարերար Կարապետ Յուզբաշյանի նշանակալի աջակցությամբ բացվում է Սահակաճուլյան օրիորդաց դպրոցը: Հենց իրենց՝ Յուզբաշյանների տունը ևս աչքի է ընկնում իր գրավիչ փայտակերտ բակով: Կառուցվել է Յուզբաշյան մեծահարուստ ընտանիքի կողմից՝ 1880-ականներին Թումանյան-Ջիվանի փողոցների հատույթում և ծառայել է որպես շահութաբեր տուն:

Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը, նույն ինքը՝ Չիթոզյանների տունը հենվից արդեն գրավում է իր գեղեցիկ փայտակերտ պատշգամբային բակով: Կառույցն ունի երկու՝ ներքին և արտաքին բակեր, վերջինս պարսպապատ է կռածո մետաղական նախշազարդ ճաղերով: Շինությանն առանձին հմայք է հաղորդում կամարակապ դարպասը:

Վերջին շրջանում քաղաքի շատ բնակիչների համար իսկական բացահայտում, իսկ զբոսաշրջիկների համար սիրելի վայր դարձավ նախկին Ֆրանսիա հյուրանոցի հսկայական բակը, այժմ՝ Գյումրի գարդեն հաուս բայ Չեչիլ Gyumri Garden Hous by Chechil ռեստորանը: Նախկին «Ֆրանսիա» հյուրանոցը կառուցվել է 1880-ականին մեծահարուստ Ռաֆայելյանցի կողմից: Ժամանակին շքեղ այս հյուրանոցն ընդունում էր քաղաքի ամենանշանավոր հյուրերին: Ծառայել է որպես ՊԱԿ-ի գրասենյակ: Հետաքրքիր են նաև դեպի բակ տանող լայն դարպասամուտքը, ալեքսանդրյան ոճին բնորոշ, գյումրեցի դարբինների ձեռքով պատրաստած դարպասները:

Հետաքրքիր բակերից է նաև Ալեքսանդրյան առաջին քաղաքապետարանի կամ հայտնի «Օժիտի շենքի» բակը: 1897թ. Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Գեղամ Տեր-Պետրոսյանը երբ ամուսնանում է Նիկողայոս Դրամփյանի դստեր՝ Ջավահիր խանումի հետ, վերջինիս հայրը նրան որպես օժիտ նվիրում է այս շենքը: Նորընտիր քաղաքապետը ոչ միայն ապրում է այս տանը, այլև այն դարձնում է քաղաքապետարան: Այստեղ հիմա մի քանի բնակիչ են ապրում, իսկ շինությունը անմխթար վիճակում է:

Խորհրդային տարիներին ևս բակերն արդեն բազմաբնակարան շենքերի ամենակատույլ վայրերից էին: Յուրաքանչյուր բակ ուներ տաղավար /բեսետկա՝ նստարանով ու սեղանով/: Բա-

կը համարվում էր հավաքատեղի, գրույցների ու քննարկումների միակ հարթակը մեծահասակների համար, իսկ բակային խաղերը, զվարճանքները՝ երեխաների համար զարգացման ու կայացման միջավայր: Գյումրվա շենքերի, բազմասենյականոց մասնավոր տների/սեփական տների/ բակերի անբաժանելի մաս էր համարվում պուլպուլակը/ցայտաղբյուրը:

Արվեստային յուրահատուկ ու քիչ հայտնի, բայց շատ հատկանշական բակերից է Կինո «Հոկտեմբերի» հարևանությամբ, Աբովյան փողոցում գտնվող շենքի բակը: Նեղիկ աստիճաններով, ծուռուծուռ սալկներով, կենցաղային կոլորիտով դեղին բակը կապված է հայտնի լուսանկարիչ Կարախանի անվան հետ:

Կարախանի լուսանկարչատունը բացվել էր 1939թ. Աբովյան փողոցում, «Հոկտեմբեր» կինոթատրոնի հարևանությամբ: Այդտեղ նախկինում տեղավորված էր «Երմակ» Համոյի մթերային խանութը: Այս լուսանկարչատունը գյումրեցիների շրջանում առավել հայտնի էր «Կարախանի ֆոտո» անվամբ: Լուսանկարչատան տնօրենը քաղաքում հայտնի զվարճախոս ու կատակասեր Գուրգեն Կարախանն էր:

Ինչպես գիտենք Գյումրին հայտնի է նաև այստեղ խորհրդային տարիներին նկարահանված ֆիլմերով, իսկ ֆիլմերն էլ իրենց հերթին բակերով, որտեղ տեղի են ունեցել շատ ու շատ դրվագներ:

Զբոսաշրջիկների համար սիրելի վայր է դարձել Ֆիլմերի բակը: Գորկու 22, այժմ Շիրազի փողոցում գտնվող կամարից կարելի է հայտնվել այնտեղ, որտեղ նկարահանվել են «Մեր մանկության տանգոն», «Ուրախ ավտոբուս», /մի հատված/ «Կտոր մը երկինք», «Տխուր փողոցի լուսաբացը» ֆիլմերից հայտնի դրվագներ:

Շենքը կառուցվել է 19-րդ դարավերջին և պատկանել է ռուսական կայսրի բարձրաստիճան սպա գնդապետ Վեբլյանին: Գնդապետը սենյակների մի մասը վարձակալությամբ է տվել հիմնականում 1840-50 թվականներին Գյումրիում հյուրընկալվող ռուս զործիչներին: Մեր ուսումնասիրությունից ու բնակիչների հետ զրույցից հետո պարզ դարձավ, որ բակում ապրել են 10 բնակիչ, սակայն այժմ ավելի քիչ են, որոշ բնակիչներ հեռացել են երկրից, մյուսները՝ տեղափոխվել: Սակայն շենքի ընդհանուր վիճակն ակնհայտ է՝ կիսախարխուլ պատշգամբ, պատերի ճաքեր ու ճեղքեր: Այնուամենայնիվ Գյումրվա բակերը մնում են գրավիչ, մի քանիսն էլ գրեթե ծպտյալ:

Գայանե ՊԱՊԻԿՅԱՆ



Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ:
 Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
 Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեն. (094) 53 44 64
 Խմբագրական խորհուրդ
 Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլտորադո Պրինտ» ՍՊԸ
 Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը
 Տպաքանակը՝ 500
 Ծավալը՝ 1 տպագրական մանուկ